ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան, Վ. Սարգսյան 5, Հեռ: (00374 10) 511-771

№ ԴԴ-1-Ա-7555
«30» հոկտեմբերի 2020թ.

«ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ռ.ԱՍԱՏՐՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Ճամբարակ, Գ.Նժդեհի փ., շ 103/26)

Հարգելի պարոն Ասատրյան,

2020 թվականի հուլիսի 21-ին Դատական դեպարտամենտի (այսուհետև՝ Պատվիրատու) և «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Կապալառու) միջև կնքվել է կապալային աշխատանքների կատարման թիվ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/01» ծածկագրով պայմանագիրը (այսուհետև՝ պայմանագիր): Պայմանագիրն ուժի մեջ է մտել 22.07.2020թ.-ին: Համաձայն պայմանագրի օրացուցային գրաֆիկի՝ Կապալառուն պետք է կատարեր շենքերի, շինությունների (ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական շենքի) ընթացիկ նորոգման աշխատանքներ՝ պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից (22.07.2020թ.) 45 օրացուցային օրվա ընթացքում՝ մինչև 04.09.2020թ.:

Կապալառուի՝ 21.08.2020թ. գրավոր առաջարկության հիման վրա, պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով՝ համաձայն կողմերի միջև 03.09.2020թ. կնքված Համաձայնագիր N 1-ի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար վերջնաժամկետ սահմանելով սույն թվականի հոկտեմբերի 4-ը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կապալառուն պայմանագրով սահմանված ժամկետում ամբողջությամբ չի կատարել պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքները, 2020 թվականի հոկտեմբերի 13-ին Դատական դեպարտամենտի ղեկավարի տեղակալի՝ Կապալառուին ուղղված թիվ ԴԴ-3-Ե-7125 գրությամբ Պայմանագրով նախատեսված աշխատանքների ողջ ծավալով կատարման համար սահմանվել է նոր ժամկետ (7 օրացուցային օր)՝ հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.2-րդ կետը: Վերը նշված գրությունը նույն օրը՝ 13.10.2020թ-ին, ուղարկվել է Կապալառուի էլեկտրոնային փոստի հասցեին, ինչպես նաև փոստային առաքման ծառայության միջոցով ուղարկվել է Կապալառուի հասցեով: Բացի այդ, գրության բովանդակության մասին բջջային հավելվածի միջոցով ծանուցվել է նաև Կապալառու կազմակերպության տնօրենը: Սակայն, մինչ օրս, Կապալառուի կողմից չի կատարվել որևէ գործողություն, որն ուղղված կլիներ Պայմանագրով նախատեսված աշխատանքների ողջ ծավալով կատարմանը:

Մինչ օրս Կապալառուի կողմից չկատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ կազմում է 3 723 667.46 (երեք միլիոն յոթ հարյուր քսաներեք հազար վեց հարյուր վաթսունյոթ դրամ, քառասունվեց լումա) ՀՀ դրամ:

Պայմանագրի 3.1.4 կետի բ) ենթակետով սահմանված է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ձեր կողմից խախտվել են Պայմանագրի 3.4.1 և 3.4.5 կետերով սահմանված պարտավորությունները, և ղեկավարվելով Պայմանագրի 3.1.4 կետի բ) ենթակետի պահանջով՝ տեղեկացվում է, որ Դատական դեպարտամենտը՝

1. միակողմանի մասնակի՝ Պայմանագրի չկատարված՝ 3 723 667.46 (երեք միլիոն յոթ հարյուր քսաներեք հազար վեց հարյուր վաթսունյոթ դրամ, քառասունվեց լումա) ՀՀ դրամի մասով, լուծում է Պայմանագիրը,
2. ձեռնարկում է Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից բխող միջոցներ,
3. հիշեցնում է, որ պատասխանատվություն եք կրում Պայմանագրի 6-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխան:

Հարգանքով՝

ԿԱՐԵՆ ՓՈԼԱԴՅԱՆ